ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2025Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 4
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 6
   3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ 8
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 10
5. ԱՄՓՈՓՈՒՄ 12

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2025թ. առաջին եռամսյակում արտաքին միջավայրում՝ համաշխարհային տնտեսության մեջ, տեղի են ունեցել էական փոփոխություններ: Մասնավորապես, ՀՀ հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճը շարունակել է մնալ դրական տիրույթում, սակայն ԱՄՆ-ում և ՌԴ-ում աճը, նախորդ եռամսյակների համեմատ, կտրուկ դանդաղել է՝ պայմանավորված սպառողական պահանջարկի թուլացմամբ: ԱՄՆ տնտեսությունն այս եռամսյակում աճել է միայն 2%-ով՝ զգալիորեն ցածր, քան նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում: Ռուսաստանում միջին աճը կազմել է 1.7%՝ եռապատիկ զիջելով նախորդ տարվա առաջին եռամսյակում արձանագրված տեմպին: Սա, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ ՀՀ տնտեսության վրա, և այդ մասին 2025թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվությունում գործող կառավարության կողմից նշելը, բնականաբար սպասելի էր: **Այնուամենայնիվ, առնվազն տարօրինակ է, որ հաշվետվությունում ընդամենը հպանցիկ է նշվում այն մասին, որ ՀՀ տնտեսական ակտիվության կտրուկ՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ շուրջ 3.5 անգամ, դանդաղման հիմնական պատճառը ռուս-ուկրաինական զինված հակամարտության հետևանքով առաջացած արտածին բարենպաստ գործոնների էական թուլացումն է (դրանց մի մասի չեզոքացումը):** Այսպես, օրինակ՝ հաշվետվությունում ընդամենը նշվում է, որ *«2025թ. առաջին եռամսյակում ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպերի դանդաղումը շարունակվել է՝ իր վրա կրելով վերամշակման և վերաարտահանման նպատակով ներմուծված թանկարժեք մետաղների ներմուծման գործոնի չեզոքացման ազդեցությունները»*՝ առանց որևէ քանակական կամ որակական գնահատական տալու կամ նախորդ ժամանակահատվածների հետ համեմատություն կատարելու:

Հաշվետվությունում նշվում է, որ 2025թ. առաջին եռամսյակում տնտեսական ակտիվության աճին ամենամեծ նպաստումը՝ 5.6 տոկոսային կետ, ունեցել է *ծառայությունների* ոլորտը, սակայն չի նշվում, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի աճին այս ոլորտի նպաստումը մեծությամբ երկրորդն էր, իսկ առաջին տեղում *արդյունաբերության* ոլորտի նպաստումն էր՝ 6.6 տոկոսային կետ, որն այս տարվա առաջին եռամսյակում բացասական է՝ -2.9 տոկոսային կետ, քանի որ արդյունաբերության ոլորտում այդ ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է կտրուկ՝ 18.5%, նվազում: Ի դեպ, այս ոլորտում **անկման բարձր տեմպեր էին արձանագրվում դեռևս 2024-ի նոյեմբերից: Թողարկման այսպիսի կտրուկ նվազումը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության նվազմամբ (բացասական նպաստումը՝ 18.4 տոկոսային կետ): Արդյունաբերության նվազմանը նպաստել է նաև**

հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ենթաճյուղի նվազումը (բացասական նպաստումը՝ 1.5 տոկոսային կետ)՝ պայմանավորված մետաղական հանքաքարի արդյունահանման նվազմամբ:

Տնտեսության մնացած ոլորտները՝ շինարարությունը, առևտուրը և գյուղատնտեսությունը, ունեցել են անհամեմատ ավելի համեստ նպաստումներ՝ համապատասխանաբար 1.0, 0.9 և 0.8 տոկոսային կետ:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքն աճել է 10%-ով՝ պայմանավորված հիմնականում բուսաբուծության աճով (նպաստումը՝ 7.1 տոկոսային կետ): Անասնաբուծությունը, ձկնորսությունը և անտառային տնտեսության նպաստումներն ավելի փոքր են՝ համապատասխանաբար 1.8, 0.9 և 0.3 տոկոսային կետ:

Շինարարության ոլորտում գրանցված 13.6% աճը պայմանավորված է եղել կազմակերպությունների, պետական բյուջեի և բնակչության միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով (նպաստումները՝ համապատասխանաբար 7.7, 4.6 և 3.0 տոկոսային կետ):

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ շինարարության աճին հիմնականում նպաստել են անշարժ գույքի հետ կապված գործունեության (հիմնականում՝ բնակարանաշինության), կրթության, տրանսպորտի, կացության և հանրային սննդի կազմակերպման, ինչպես նաև էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտներում շինարարության ծավալների աճերը:

Ծառայություններն աճել են 11.5%-ով՝ հիմնականում պայմանավորված ֆինանսական և ապահովագրական գործունեության (մասնավորապես՝ բանկերի գործունեության), ինչպես նաև տեղեկատվություն և կապի (մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների) ենթաճյուղերի աճերով (նպաստումները՝ համապատասխանաբար 6.4 և 3.4 տոկոսային կետ): Ճյուղի աճին հակազդել է տրանսպորտի ենթաճյուղի 10.6%-ով նվազումը (բացասական նպաստումը՝ 1.1 տոկոսային կետ):

***Առևտրի* աճի տեմպը կտրուկ նվազել է՝ հասնելով 6%-ի, այն դեպքում, երբ մեկ տարի առաջ՝ 2024թ. առաջին եռամսյակում, առևտրի աճը 26.5% էր:** Առևտրի աճին ամենամեծ նպաստումը (3.9 տոկոսային կետ) ունեցել է մեծածախ առևտուրը: Մանրածախ և ավտոմեքենաների առևտրի աճերը նույնպես նպաստել են ընդհանուր առևտրի աճին (համապատասխանաբար 1.6 և 0.6 տոկոսային կետով):

2025թ. առաջին եռամսյակում գրանցվել է *արտաքին ապրանքաշրջանառության* կտրուկ անկում՝ հիմնականում պայմանավորված վերաարտահանման ծավալների զգալի նվազմամբ: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2025թ. հունվար-մարտ ամիսներին կազմել է 4,480.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 54.2%-ով: **Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել են դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման կտրուկ անկումներ.** արտահանումը նվազել է 61.8%-ով՝ կազմելով 1,699.8 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 47.9%-ով՝ կազմելով 2,780.3 մլն ԱՄՆ դոլար: **2025 թվականի առաջին եռամսյակում արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ վատթարացել է 22.1%-ով և կազմել 1,080.5 մլն ԱՄՆ դոլար: Վատթարացումը պայմանավորված է նրանով, որ անկումն արտահանման ծավալների գծով ավելի մեծ է եղել, քան ներմուծման գծով:**

2025թ. առաջին եռամսյակում միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 5.7%-ով՝ կազմելով 298,879 դրամ: Պետական հատվածում այն աճել է 5.2%-ով՝ կազմելով 219,542 դրամ, իսկ ոչ պետականում՝ 5.4%-ով և կազմել 330,270 դրամ:

Դեպի ՀՀ ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների զուտ ներհոսքը 2025թ. հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 48.4%-ով կամ 134.9 մլն ԱՄՆ դոլարով և կազմել շուրջ 143.7 մլն դոլար: Նվազումը պայմանավորված է արտահոսքի աճով՝ 191.9 մլն ԱՄՆ դոլարով:

2025թ. առաջին եռամսյակի ընթացքում գնաճը որոշակիորեն արագացել է՝ մոտ լինելով ԿԲ թիրախային 3% ցուցանիշին: 12-ամսյա գնաճը մարտին կազմել է 3.3%, միջին գնաճը՝ 2.5%, իսկ բնականոն գնաճը՝ 2%: Առաջին եռամսյակում ԿԲ-ն 0.25 տոկոսային կետով նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը՝ փետրվարի 4-ին իջեցնելով 0.25 տոկոսային կետով, իսկ մարտի 18-ին այն թողնելով անփոփոխ՝ 6.75% մակարդակում:

Ընդհանուր առմամբ, 2025թ. առաջին եռամսյակի մակրոտնտեսական իրավիճակի վերլուծությունը ևս մեկ անգամ ի ցույց է դնում պետական կառավարման թերություններն ու արտաքին ցնցումների նկատմամբ տնտեսության նվազած դիմադրողականությունը: Ուստի, եթե կառավարությունը չվերանայի վարվող տնտեսական քաղաքականությունը և չձևավորի ավելացված արժեքի ստեղծմանը և արտահանման խթանմանը միտված հստակ զարգացման ռազմավարություն, նման թույլ աճի տեմպերն

առավել կխորացնեն արձանագրված բացասական միտումները և, մասնավորապես, կվտանգեն բյուջեի կատարումը:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Համաձայն կառավարության կողմից՝ 2025թ. «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքի հիման վրա հաստատված եռամսյակային համամասնությունների՝ առաջին եռամսյակի եկամուտների, ծախսերի և պակասուրդի պլանային մեծությունները կազմել են համապատասխանաբար 584.7 մլրդ դրամ, 816.8 մլրդ դրամ և 232.1 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են շուրջ 597.4 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ճշտված ծրագրի 102.1% կատարողական: Պետական բյուջեի փաստացի եկամուտների 94.8%-ը կազմում են հարկային եկամուտները և պետական տուրքերը, որոնք ճշտված պլանի ցուցանիշին գերազանցում են 0.5%-ով: Պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվել է 1.5 մլրդ դրամ՝ պլանավորվածից 22.9%-ով պակաս: **Պաշտոնական դրամաշնորհների գծով թերակատարումը պայմանավորված է նպատակային ծրագրերի ցածր կատարողականով: Պաշտոնական դրամաշնորհների թերակատարման առումով 2025թ. առաջին եռամսյակը բացառություն չէ՝ պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները գործող կառավարության իշխանավարման օրոք թերակատարվել են, ըստ էության, բոլոր հաշվետու ժամանակահատվածներում, քանի որ դոնորների հետ նախապես համաձայնեցված նախապայմանների կատարման հարցում ոչ մի կերպ չի հաջողվում խուսափել լուրջ թերացումներից:**

Հաշվետու ժամանակահատվածում բյուջեի ընդհանուր եկամուտների՝ պլանավորվածին գերազանցող ցուցանիշը հաջողվել է ապահովել հիմնականում շնորհիվ այլ եկամուտների գծով մուտքերի զգալի աճի: Դրանց կատարողականը 149.6% է:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2024թ.	2025թ.			
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, *այդ թվում՝*	**525.0**	**584.7**	**585.0**	**597.4**	**102.1**
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	*500.6*	*563.1*	*563.4*	*566.5*	*100.5*
Պաշտոնական դրամաշնորհներ	*0.5*	*1.9*	*1.9*	*1.5*	*77.1*
Այլ եկամուտներ	*23.9*	*19.7*	*19.7*	*29.4*	*149.6*

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են շուրջ 566.5 մլրդ դրամ:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի ավելացված արժեքի հարկը՝ 36.9%, որի բացարձակ մեծությունը կազմել է 208.8 մլրդ դրամ: Տեսակարար կշռով հաջորդ մեծ եկամտատեսակը 169.2 մլրդ դրամ կազմող եկամտային հարկն է, որի տեսակարար կշիռը 29.9% է: Զգալի են նաև շահութահարկի, սոցիալական վճարի և ակցիզային հարկի տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 10.9%, 5.1% և 5%:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2024թ. առաջին եռամսյակի փաստացի (մլրդ դրամ)	2025թ. առաջին եռամսյակի փաստացի (մլրդ դրամ)	2025թ. առաջին եռամսյակը 2024թ. առաջին եռամսյակի նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	**500.6**	**566.5**	**113.2**
1. Հարկային եկամուտներ, *այդ թվում՝*	**485.7**	**549.3**	**113.1**
ԱԱՀ	*164.3*	*208.8*	*127.1*
Ակցիզային հարկ	*30.1*	*28.5*	*94.6*
Շահութահարկ	*50.8*	*61.8*	*121.8*
Մաքսատուրք	*17.9*	*18.1*	*101.2*
Եկամտային հարկ	*150.6*	*169.2*	*112.4*
Շրջանառության հարկ	*15.1*	*18.3*	*121.4*
Սոցիալական վճար (կուտակային կենսաթոշակի գծով)	*25.7*	*28.6*	*111.1*
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	*12.8*	*-1.7*	*-13.0*
Այլ հարկեր	*18.4*	*17.6*	*95.7*
2. Պետական տուրք	**14.9**	**17.2**	**115.3**

2025 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջե են մուտքագրվել 17.2 մլրդ դրամ պետական տուրքեր:

ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները 2025թ. առաջին եռամսյակում կազմել են 29.4 մլրդ դրամ՝ ծրագրված ցուցանիշից 49.6%-ով ավելի: Մասնավորապես, 2.5 մլրդ դրամ են կազմել իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների գծով մուտքերը, որոնք ճշտված պլանով ծրագրված էին ընդամենը 10 մլն դրամի չափով: Ըստ 2025թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության՝ աճը հիմնականում պայմանավորված է «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի կողմից վճարված շահաբաժիններով: Եվս 6.5 մլրդ դրամի կամ ճշտված պլանի ցուցանիշից 1.2 մլրդ դրամով ավելի մուտքեր են ապահովվել իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների գծով: **Ճշտված պլանի ցուցանիշից 12.3%-ով ավելի են եղել բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, որոնք կազմել են 7.7 մլրդ դրամ: Այս երևույթը խորհելու տեղիք է տալիս, քանի որ բյուջեում զգալի ազատ միջոցների առկայությունը, կարևորագույն ծրագրերի գծով ծախսերի թերակատարման փաստը (ինչի մասին առավել մանրամասն ներկայացված է սույն տեղեկանքի հաջորդ բաժիններում), ինչպես նաև նշված ազատ միջոցների բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում տեղաբաշխումը վկայում են ծախսային քաղաքականության իրականացման անարդյունավետության մասին:**

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2025թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 576.2 մլրդ դրամ: **Պետական բյուջեի ծախսերի եռամսյակային ճշտված ծրագրի թերակատարումը կազմել է 29.6% կամ 242.1 մլրդ դրամ: Թերակատարված ընդհանուր գումարի 37.6%-ը՝ *ընթացիկ ծախսերի*, իսկ 62.4%-ը՝ *ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների* գծով է** (Աղյուսակ 3):

Պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 98.3%-ը կամ 566.5 մլրդ դրամը: Դրանց գծով եռամսյակային ծրագրի թերակատարումը կազմում է 22.0%: **Արտաքին աղբյուրների հաշվին ծախսերի կատարման եռամսյակային ծրագիրը, ըստ էության, ձախողվել է. դրանք կազմել են ընդամենը 9.7 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 1.7%-ը)՝ ճշտված պլանի ցուցանիշից 9.5 անգամ (89.5%-ով) պակաս:**

Աղյուսակ 3. ՀՀ պետական բյուջեի ծախսերը (մլրդ դրամ)

ԾԱԽՍԵՐ	2024թ. առաջին եռամսյակի փաստացի	2025թ. առաջին եռամսյակի պլան	2025թ. առաջին եռամսյակի ճշտված պլան	2025թ. առաջին եռամսյակի փաստացի	Կատարող-ականը ճշտված պլանի նկատմամբ (%)
Ընդամենը ծախսեր	**525.9**	**816.8**	**818.3**	**576.2**	**70.4**
Ընթացիկ ծախսեր	*461.0*	*591.7*	*592.4*	*501.4*	*84.6*
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	*64.9*	*225.1*	*225.9*	*74.7*	*33.1*

2025թ. առաջին եռամսյակում պետական բյուջեի *ընթացիկ ծախսերը* կազմել են 501.4 մլրդ դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 15.4%-ով:

Այս տարի ևս (ինչպես և նախորդ տարի) առաջին եռամսյակում **թերակատարվել են ընթացիկ ծախսերի բոլոր բաղադրիչները:** Ճշտված պլանի համեմատ առավել մեծ են «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում», «այլ ծախսեր» և «սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ» հոդվածների գծով ծախսերի թերակատարումը՝ համապատասխանաբար 38.4%-ով, 17.5%-ով և 16.0%-ով:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2024թ.	2025թ.			
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	**525.9**	**816.8**	**818.3**	**576.2**	**70.4**
Ընթացիկ ծախսեր	**461.0**	**591.7**	**592.4**	**501.4**	**84.6**
Աշխատանքի վարձատրություն	*45.2*	*56.3*	*55.8*	*50.0*	*89.6*
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	*14.6*	*24.4*	*23.8*	*14.7*	*61.6*
Տոկոսավճարներ	*39.6*	*46.1*	*46.1*	*39.2*	*85.0*
Սուբսիդիաներ	*35.3*	*41.7*	*41.8*	*39.9*	*95.4*
Դրամաշնորհներ	*55.7*	*73.3*	*73.8*	*63.5*	*86.0*
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	*234.2*	*296.5*	*297.9*	*250.3*	*84.0*
Այլ ծախսեր	*36.3*	*53.3*	*53.2*	*43.9*	*82.5*
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	**64.9**	**225.1**	**225.9**	**74.7**	**33.1**

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	**71.0**	**228.1**	**228.9**	**75.2**	**32.9**
Շենքեր և շինություններ	*66.2*	*215.9*	*214.1*	*69.5*	*32.5*
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	*4.0*	*8.8*	*10.6*	*4.9*	*46.5*
Այլ հիմնական միջոցներ	*0.8*	*3.4*	*4.2*	*0.8*	*18.6*
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	**(6.1)**	**(3.0)**	**(3.0)**	**(0.5)**	**15.5**

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) 2025թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 5.9%-ով և կազմել 75.2 մլրդ դրամ, սակայն դրանք պակաս են ճշտված պլանի ցուցանիշի՝ 228.9 մլրդ դրամի նույնիսկ 1/3-ից՝ դրանց գծով թերակատարումը 67.1% է: Ընդ որում, կապիտալ ծախսերի դեպքում ևս թերակատարումը բոլոր բաղադրիչների գծով է: **Կապիտալ ծախսերի ցածր կատարողականն առավելապես պայմանավորված է ընդհանուր կապիտալ ծախսերի հիմնական մասը կազմող՝ ՀՀ պաշտպանության ապահովման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով, որոնք կազմել են 50.9 մլրդ դրամ կամ ծրագրված 170.2 մլրդ դրամ ցուցանիշի ընդամենը 29.9%-ը:**

3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր 166 ծրագրերի իրականացում 47 պետական մարմինների և կառավարության պատասխանատվության ներքո: Առաջին եռամսյակում փաստացի միջոցներ են օգտագործվել 157-ի գծով, ընդ որում՝ ՀՀ կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն ըստ անհրաժեշտության վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին: Ծրագրերի շրջանակներում առաջին եռամսյակում նախատեսված 746 միջոցառումներից (առանց ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 3 միջոցառումների) ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 620-ը կամ 83.1%-ը:

2025 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի ծախսերի 242.1 մլրդ դրամ թերակատարման զգալի մասը երկու նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով է՝ պաշտպանության նախարարության՝ 124.9 մլրդ դրամ և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 34.4 մլրդ դրամ:

Տոկոսային արտահայտությամբ առավել նշանակալի են հետևյալ նախարարությունների պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով ընդհանուր թերակատարումները՝ պաշտպանության նախարարություն՝ 57.5%, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն՝ 53.0%, շրջակա միջավայրի նախարարություն՝ 48.9%, առողջապահության նախարարություն՝ 36.7%:

Ստորև ներկայացվում են տվյալներ առավել ցածր կատարողական գրանցած որոշ ծրագրերի վերաբերյալ.

Աղյուսակ 5. 2025թ. առաջին եռամսյակում իրականացված որոշ ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը, մլն դրամ

N	Ծրագիր	Պատասխանատու	2025թ. առաջին եռամս-յակի ճշտված պլան	2025թ. առաջին եռամս-յակի փաստացի	Կատարո-ղականը ճշտված պլանի նկատ-մամբ, %
1.	*Քաղաքային զարգացում*	**Տարածքային կառա-վարման և ենթակա-ռուցվածքների նախարարություն**	*3,273.1*	*372.5*	*11.4*
2.	*Ոռոգման համակարգի առողջացում*		*4,102.1*	*1,444.9*	*35.2*
3.	*Գյուղատնտեսության խթանման ծրագիր*	**Էկոնոմիկայի նախարարություն**	*2,345.9*	*1,628.2*	*69.4*
4.	*Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում*	**ԿԳՄՍ նախարարություն**	*21,724.7*	*7,599.7*	*35.0*
5.	*ՀՀ պաշտպանության ապահովում*	**Պաշտպանության նախարարություն**	*216,415.9*	*91,705.0*	*42.4*
6.	*Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն*	**Առողջապահության նախարարություն**	*14,198.8*	*7,737.9*	*54.5*
7.	*Անտառների կառավարում*	**Շրջակա միջավայրի նախարարություն**	*2,139.8*	*867.7*	*40.5*
8.	*Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում*	**Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն**	*510.8*	***0.0***	***0.0***
9.	*Թվային փոխակերպման գործընթացի իրականացում*		*1,393.3*	*38.3*	*2.7*

Ինչպես միշտ, այս անգամ էլ իրականացվող ծրագրերի բոլոր թերակատարումները փորձ է արվում «արդարացնել» տարբեր պատճառաբանություններով՝ անբարենպաստ եղանակային պայմաններ, որոշ ընթացակարգային ձգձգումներ, կատարողական ակտերի ուշ ներկայացում և այլն: Այնուամենայնիվ, **նկատի ունենալով, որ գործող իշխանության օրոք սովորական են դարձել այդպիսի թերակատարումները, իսկ**

«արդարացումներն» էլ նույնաբովանդակ են, կասկածից վեր է, որ իշխանությունը պարզապես ի զորու չէ ապահովել պետական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2025թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 21.2 մլրդ դրամ հավելուրդով՝ ծրագրված 233.3 մլրդ դրամ պակասուրդի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.9 մլրդ դրամ փաստացի պակասուրդի դիմաց: Բյուջեի հավելուրդը հիմնականում ծախսերի ցածր կատարողականի հետևանք է:

Աղյուսակ 6. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2024թ.	2025թ.			
	Առաջին եռամս-յակի փաստացի	Առաջին եռամս-յակի պլան	Առաջին եռամս-յակի ճշտված պլան	Առաջին եռամս-յակի փաստացի	Կատարո-ղականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	**0.9**	**232.1**	**233.3**	**-21.2**	**-9.1**
Պակասուրդի ֆինանսավորումը՝					
Ա. Ներքին աղբյուրներ, *այդ թվում՝*	**30.3**	**122.5**	**123.6**	**-155.6**	**-125.9**
1. Փոխառու զուտ միջոցներ	*118.8*	*107.9*	*107.9*	*92.2*	*85.5*
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	*-88.5*	*14.6*	*15.8*	*-247.8*	*-1572.6*
Բ. Արտաքին աղբյուրներ, *այդ թվում՝*	**-29.5**	**109.6**	**109.6**	**134.4**	**122.6**
1. Փոխառու զուտ միջոցներ	*-29.0*	*111.0*	*111.0*	*130.4*	*117.4*
2.Ֆինանսական զուտ ակտիվներ	*-0.5*	*-1.4*	*-1.4*	*4.0*	*289.3*

Բյուջեի հավելուրդը հանգեցրել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում նախատեսված բյուջեի ազատ միջոցների աճին: Արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի գծով արձանագրվել է ծայրահեղ ցածր ցուցանիշ՝ եռամսյակային ծրագրի ցուցանիշի (91.4 մլրդ դրամ) ընդամենը 5.3%-ը կամ 4.8 մլրդ դրամ: Ցածր կատարողականը վկայում է նպատակային (կապիտալ) ծրագրերի լուրջ թերակատարման մասին:

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին աղբյուրներից փոխառու միջոցների հաշվին հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից զուտ մուտքերի հաշվին, որոնք կազմել են 92.2 մլրդ դրամ կամ ճշտված պլանով ծրագրված մեծության

85.5%-ը: 14.5%-ով թերակատարումը պայմանավորված է 10 տարի ժամկետայնությամբ պարտատոմսերի թերտեղաբաշխմամբ:

2025թ. առաջին եռամսյակի ընթացքում բյուջեի պակասուրդի՝ ներքին աղբյուրներից ֆինանսական զուտ ակտիվների հաշվին ֆինանսավորումը կազմել է -247.8 մլրդ դրամ՝ առաջին եռամսյակում ծրագրված 15.8 մլրդ դրամի դիմաց:

Բյուջեի պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրներում 130.4 մլրդ դրամը կազմել են փոխառու զուտ միջոցները:

Բյուջեի ծախսերի թերակատարման և հարկային օրենսդրական փաթեթներում խստացումների գծով մի շարք փոփոխությունների (այդ թվում՝ ԱԱՀ-ով հարկվող անձանց շրջանակի ընդլայնման, ակցիզային հարկի, բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի, ինչպես նաև այլ տիպի վճարների բարձրացման) պատճառով հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա ընթացիկ տարվա առաջին եռամսյակում ունեցել է զսպող ազդեցություն՝ ծրագրված չեզոք ազդակի դիմաց:

ՀՀ պետական պարտքը 2025թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 5,318 մլրդ դրամ (13,581 մլն ԱՄՆ դոլար): Այն դրամային և դոլարային արտահայտությամբ նախորդ տարեվերջի համեմատությամբ աճել է համապատասխանաբար 4.4%-ով (225.5 մլրդ դրամով) և 5.8%-ով (738.8 մլն ԱՄՆ դոլարով): Ե՛վ դրամային, և՛ դոլարային արտահայտությամբ պետական պարտքի աճը հիմնականում պայմանավորված է կառավարության պարտքի աճով՝ համապատասխանաբար 4.6%-ով և 5.9%-ով: Աճի տեմպերի տարբերության հիմնական պատճառը ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի փոփոխությունն է. այն 2025թ. առաջին եռամսյակում նվազել է 1.3% ով՝ 396.56-ից դառնալով 391.59:

Պետական պարտքի 96.2%-ը կազմել է կառավարության պարտքը, իսկ 3.8%-ը՝ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը:

Պետական պարտքից 2,734 մլրդ դրամը (6,982 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 2,584 մլրդ դրամը (6,599 մլն ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը: Արտաքին պետական պարտքը 2025թ. մարտի 31-ի դրությամբ 2024թ. տարեվերջի համեմատ 527.5 մլն ԱՄՆ դոլարով (8.2%-ով) ավելի է: Աճը հիմնականում պայմանավորված է կառավարության արտաքին պարտքի 521 մլն ԱՄՆ դոլարով (8.8%-ով) աճով: ՀՀ ԿԲ արտաքին պարտքը նույն ժամանակահատվածում աճել է 6.5 մլն ԱՄՆ դոլարով (1.3%-ով): Արտաքին պարտքի տեսակարար կշիռը պետական պարտքի կառուցվածքում նշված ժամանակահատվածում աճել է՝ 50.3%-ից հասնելով 51.4%-ի:

ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը 2025թ. առաջին եռամսյակի ընթացքում շարունակել է նվազել: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2025թ. մարտին կազմել է 8.2%՝ նախորդ տարվա մարտի ցուցանիշից 1.4 տոկոսային կետով ցածր: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունն ավելի քիչ է նվազել՝ 0.4 տոկոսային կետով և կազմել է 9.4%:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

- **ՀՀ տնտեսական ակտիվությունը կտրուկ՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ շուրջ 3.5 անգամ, նվազել է՝ կազմելով 4.1%: Դանդաղման հիմնական պատճառը ռուս-ուկրաինական զինված հակամարտության հետևանքով առաջացած արտածին բարենպաստ գործոնների էական թուլացումն է (որոշ արտածին դրական գործոնների ընդհանրապես չեզոքացումը): Նշված բացասական ազդեցությունն ամենաընդգծված կերպով դրսևորվել է արդյունաբերության ոլորտում, որն ընթացիկ տարվա առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կտրուկ՝ 18.5%-ով, նվազել է:**

  Առևտրի աճի տեմպը կտրուկ նվազել է՝ հասնելով 6%-ի, այն դեպքում, երբ նախորդ տարվա առաջին եռամսյակում այն 26.5% էր:

  Արտահանումը և ներմուծումը կտրուկ կրճատվել են՝ համապատասխանաբար 61.8%-ով և 47.9%-ով: Այսպիսի կտրուկ անկումը հիմնականում պայմանավորված է վերաարտահանման ծավալների զգալի նվազմամբ:

- ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2025թ. առաջին եռամսյակում կազմել են 597.4 մլրդ դրամ՝ ճշտված պլանի ցուցանիշից 2.1%-ով ավելի: Բյուջեի ընդհանուր եկամուտների՝ պլանավորվածից ավելի հավաքագրումը հիմնականում հաջողվել է շնորհիվ այլ եկամուտների գծով մուտքերի: Դրանց կատարողականը 149.6% է: Մինչդեռ, պաշտոնական դրամաշնորհների գծով արձանագրվել է 22.9% թերակատարում: **Ընդ որում, պաշտոնական դրամաշնորհների թերակատարման առումով 2025թ. առաջին եռամսյակը բացառություն չէ՝ դրանք, ըստ էության, գործող կառավարության իշխանավարման ողջ ընթացքում թերակատարվել են, քանի որ պատկան մարմինները շարունակաբար թերանում են դոնորների հետ նախապես համաձայնեցված նախապայմանների կատարման հարցում:**

- **2025 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 576.2 մլրդ դրամ՝ ճշտված պլանի ցուցանիշից 29.6%-ով կամ 242.1 մլրդ դրամով պակաս: Ընդ որում, թերակատարված**

ընդհանուր գումարի 37.6%-ը՝ ընթացիկ ծախսերի, իսկ 62.4%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով է:

Ընթացիկ և կապիտալ ծախսերը թերակատարվել են՝ համապատասխանաբար 15.4 և 67.1 տոկոսով:

Այս տարի ևս (ինչպես և նախորդ տարի) առաջին եռամսյակում **թերակատարվել են ընթացիկ ծախսերի բոլոր բաղադրիչները:**

Ծրագրված ընդհանուր կապիտալ ծախսերի՝ 228.9 մլրդ դրամի ցածր կատարողականն առավելապես պայմանավորված է կապիտալ ծախսերի հիմնական մասը կազմող՝ ՀՀ պաշտպանության ապահովման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով, որոնք կազմել են ծրագրված 170.2 մլրդ դրամ ցուցանիշի ընդամենը 29.9%-ը՝ 50.9 մլրդ դրամ: Ի դեպ, 2025 թվականի բյուջեն ներկայացնելիս, որպես դրա կարևոր առավելություն, իշխանությունը շեշտում էր հենց պաշտպանության գծով կապիտալ ծախսերի համար մեծ գումարների հատկացումը: Ստացվում է, որ կարևորը միջոցները հատկացնելն է, ոչ թե նախատեսված աշխատանքները կատարելը:

Թերակատարվել են հաշվետվությունում առանձին-առանձին նշված բոլոր պատասխանատու մարմինների գծով իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը: Առավել նշանակալի են պաշտպանության, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, շրջակա միջավայրի և առողջապահության նախարարությունների պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով թերակատարումները՝ համապատասխանաբար 57.5%, 53.0%, 48.9% և 36.7%:

Կասկածից վեր է, որ գործող իշխանությունը պարզապես ի զորու չէ ապահովել պետական կարևորագույն ծրագրերի (ինչպիսիք են, օրինակ՝ «ՀՀ պաշտպանության ապահովում», «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում», «Գյուղատնտեսության խթանում», «Թվային փոխակերպման գործընթացի իրականացում» և «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում» ծրագրերը) արդյունավետ իրականացումը:

- **2025թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեն ունեցել է 21.2 մլրդ դրամ հավելուրդ՝ ծրագրված 233.3 մլրդ դրամ պակասուրդի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.9 մլրդ դրամ փաստացի պակասուրդի դիմաց: Հավելուրդի հիմնական պատճառը ծախսերի ցածր կատարողականն է:**

2025թ. առաջին եռամսյակի մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը պետական կառավարման թերությունների ու տնտեսության նվազած դիմադրողականության հետևանք է, և բոլոր հիմքերը կան մտահոգվելու, որ արդեն իսկ դրսևորվող բացասական միտումները մոտ ապագայում առավել կխորանան՝ վտանգելով պետական բյուջեի կատարումը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: